

**ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
“ԴԻՎԻԴԱ ԷՅ ԷՄ” ՓԲԸ
ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆԻ ԿՈՂՄԻՑ
ՀՐԱՄԱՆ ԹԻՎ Վ06-15
“16” նոյեմբերի 2015 թ.**

**Փոփոխված է
“ԴԻՎԻԴԱ ԷՅ ԷՄ” ՓԲԸ
ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆԻ ԿՈՂՄԻՑ
ՀՐԱՄԱՆ ԹԻՎ Վ02-16
“02” մարտի 2016 թ.**

**Փոփոխված է
“ԴԻՎԻԴԱ ԷՅ ԷՄ” ՓԲԸ
ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆԻ ԿՈՂՄԻՑ
ՀՐԱՄԱՆ ԹԻՎ Վ09-16
“02” նոյեմբերի 2016 թ.**

**Փոփոխված է
“ԴԻՎԻԴԱ ԷՅ ԷՄ” ՓԲԸ
ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆԻ ԿՈՂՄԻՑ
ՀՐԱՄԱՆ ԹԻՎ ՎՀ 17-17
“20” մայիսի 2017 թ.**

**Փոփոխված է
“ԷՔՈՒԻԹԻ ԷՅ ԷՄ” ՓԲԸ
ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆԻ ԿՈՂՄԻՑ
ՀՐԱՄԱՆ ԹԻՎ ՎՀ 04-19
“6” մարտի 2019 թ.**

Կ Ա Ն Ո Ն Ա Կ Ա Ր Գ

Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի

info@equiti.am | 5 Baghramyan Street, Apt 11, 0019, Yerevan, Republic of Armenia | +374 10.580972

Equiti AM CJSC (“Equiti AM”) is Authorised and Regulated by the Central Bank of Armenia (License Number 0011). Registered office at 5 Baghramyan Street, Apt 11, 0019, Yerevan, Republic of Armenia

Էքուիթի ԷՅ ԷՄ ՓԲԸ (“Էքուիթի ԷՅ ԷՄ”) Լիզոգրված է և Կանոնակարգվում է ՀՀ Կենտրոնական Բանկի կողմից (Լիցենզիայ N 0011).
Չասցե՝ Բաղրամյան 5. քնակարան 11, 0019, Երևան, Հայաստանի Հանրապետություն

1. ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Փողերի լվացման և ահաբեկչության դեմ պայքարի կանոնակարգի (այսուհետ՝ Կանոնակարգ) նպատակն է կանխարգելել և արգելել «Էքուիթի Էյ Էմ» ՓԲԸ-ի (հետագայում Ընկերություն) կողմից իր հաճախորդներին մատուցվող ծառայությունների օգտագործումը հանցավոր ճանապարհով ձեռք բերված միջոցների օրինականացման, ինչպես նաև ահաբեկչության կամ զանգվածային ոչնչացման զենքի տարածման ֆինանսավորման նպատակներով: Այդ առումով Կանոնակարգը սահմանում է փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման (այսուհետ՝ ա) կանխարգելման ուղղությամբ ձեռնարկվող միջոցառումները, կարգավորում է փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելման գործընթացում ներգրավված անձանց լիազորությունները, նրանց համագործակցության կարգը, հաճախորդների պատշաճ ուսումնասիրության կարգը, ՀՀ կենտրոնական բանկ կասկածելի գործարքների վերաբերյալ հաշվետվություն ներկայացնելու ընթացակարգը, տեղեկատվության հավաքման, պահպանման կարգը, ինչպես նաև Ընկերության աշխատակիցների համար թրեյնինգների կազմակերպման կարգն ու հաճախականությունը:

1.2. ՀՀ «Էքուիթի Էյ Էմ» ՓԲԸ-ն ներդրումային ընկերությունը է, որ պրոֆեսիոնալ հաճախորդներին «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն իր լիցենզիայի շրջանակներում մատուցում է ներդրումային ծառայություններ: Ընկերությունն իր գործառնությունները իրականացնում է բացառապես անկանխիկ ձևով, չի ընդունում կանխիկ գումարներ և չի կատարում կանխիկ գումարներով գործարքներ:

1.3. ՓԼ/ԱՖ կանխարգելման ուղղությամբ իր գործունեության ընթացքում Ընկերությունն առաջնորդվում է «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի

մասին” ՀՀ օրենքով (այսուհետ՝ Օրենք), “Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի ոլորտում հաշվետվություն տրամադրող անձանց համար սահմանվող նվազագույն պահանջների վերաբերյալ” ՀՀ Կենտրոնական Բանկի 2014թ. հոկտեմբերի 7-ի թիվ 279-Ն որոշման դրույթներով և պահպանում է ներդրումային ընկերությունների ոլորտում գոյություն ունեցող միջազգային ստանդարտների պահանջները, անշեղորեն վարում է փողերի լվացման կանխարգելման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի հետևողական քաղաքականություն, ինչպես նաև առաջնորդվում է «Ճանաչիր քո հաճախորդին» (KYC-Know Your Customer) սկզբունքով:

2. ԿԱՆՈՆԱԿԱՐԳՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Սույն Կանոնակարգում օգտագործվող հասկացությունները կիրառվում են Օրենքին համապատասխան դրանց տրված իմաստով, եթե այլ բան սահմանված չէ սույն Կանոնակարգով:

3. ՀԱՃԱԽՈՐԴԻ ՀԵՏ ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ ԿԱՄ ԳՈՐԾԱՐՔԻ ԿՆՔՈՒՄԸ: ՀԱՃԱԽՈՐԴԻ ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՈՒՄԸ

3.1. Ընկերությունը հաճախորդի հետ կարող է իրականացնել գործարար հարաբերություններ, կնքել գործարքներ՝ ներառյալ մեկանգամյա գործարքներ բացառապես Ընկերությունում հաշիվ բացելուց հետո, որը բացվում է **առցանց (Ներդրումային ընկերության կայքէջում կամ տրամադրված հղմամբ)** կամ Ընկերության՝ հաճախորդների սպասարկման գրասենյակում անձամբ կամ լիազորված ներկայացուցչի միջոցով լրացված հաշվի բացման դիմումի հիման վրա:

Ընկերության գրասենյակում կամ գրասենյակից դուրս անմիջապես Ընկերության աշխատակցի հետ առերես շփվելով հաճախորդի հաշիվ բացելիս, Ընկերության աշխատակիցը ընդունում է ներկայացված բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը և

info@equiti.am | 5 Baghramyan Street, Apt 11, 0019, Yerevan, Republic of Armenia | +374 10.580972

Equiti AM CJSC (“Equiti AM”) is Authorised and Regulated by the Central Bank of Armenia (License Number 0011). Registered office at 5 Baghramyan Street, Apt 11, 0019, Yerevan, Republic of Armenia

Էքուիթի ԷՅ ԷՄ ՓԲԸ (“Էքուիթի ԷՅ ԷՄ”) Լիազորված է և Կանոնակարգվում է ՀՀ Կենտրոնական Բանկի կողմից (Լիցենզիայ N 0011).

Հասցե՝ Բաղրամյան 5. քնակարան 11, 0019, Երևան, Հայաստանի Հանրապետություն

տեղեկատվությունը, ստուգում դրա իսկությունը, պատճենահանում կամ սկանավորում է դրանք և ներբեռնում տվյալ հաճախորդի անվամբ բացված համապատասխան էլեկտրոնային թղթապանակում:

Բոլոր հաստատող փաստաթղթերը պետք է ներկայացվեն անգլերեն կամ ռուսերեն: Այլ լեզուներով ներկայացված փաստաթղթերն ընդունվում են, եթե Ընկերությունը կամ Ընկերության գործընկեր կազմակերպություններն ապահովում է դրանց պատշաճ թարգմանությունն անգլերեն կամ ռուսերեն, կամ եթե փաստաթղթերը և/կամ դրանում պարունակող տեղեկություններն Ընկերության ՓԼ/ԱՖ պատասխանատուի համար հասկանալի են և հավաստի:

3.2. Ընկերությունը չի բացի անանուն կամ մտացածին անուններով հաշիվներ, միայն թվային, տառային կամ պայմանական այլ նշաններով արտահայտված հաշիվներ, հաշիվներ, որոնք սպասարկվում են կեղծ (շեյ) բանկերի միջոցով կամ որևէ կերպ կապված են նման բանկերի հետ:

Ընկերությունը չի ընդունում այնպիսի բանկերի միջոցով կատարված վճարումների, որոնք ունեն բացասական վարկանիշ կամ գտնվում են այնպիսի իրավակարգավորման ներքո, որոնք ՓԼ/ԱՖ դեմ պայքարի տեսակնյունից չեն ենթարկվում պատշաճ կարգավորման ու վերահսկողության, ինչպես նաև գրանցված են, գտնվում կամ գործում են չհամապատասխանող երկրում կամ տարածքում:

3.3. Ընկերությունը չի բացի հաշիվ, չի հաստատի գործարար հարաբերություն կամ չի իրականացնի մեկանգամյա գործարք այնպիսի տեղեկատվության հիման վրա, որի միջոցով անհնար կլինի հաճախորդի նույնականացումը կամ նրա պատշաճ ուսումնասիրությունը: Ընկերությունն չի ընդունում կամ չի կատարում երրորդ կողմին վճարումներ: Բոլոր վճարումները ընդունվում են և կատարվում են միայն հաճախորդի բանկային հաշվին: Այդպիսի դեպքում Ընկերության ՓԼ/ԱՖ պատասխանատուն պետք է դիտարկի կասկածելի գործարքի հաշվետվություն ներկայացնելու հարցը:

info@equiti.am | 5 Baghramyan Street, Apt 11, 0019, Yerevan, Republic of Armenia | +374 10.580972

Equiti AM CJSC ("Equiti AM") is Authorised and Regulated by the Central Bank of Armenia (License Number 0011). Registered office at 5 Baghramyan Street, Apt 11, 0019, Yerevan, Republic of Armenia

Էքուիթի ԷՅ ԷՄ ՓԲԸ ("Էքուիթի ԷՅ ԷՄ") Լիազորված է և Կանոնակարգվում է ՀՀ Կենտրոնական Բանկի կողմից (Լիցենզիայ N 0011).

Հասցե՝ Բաղրամյան 5. քնակարան 11, 0019, Երևան, Հայաստանի Հանրապետություն

3.4. Ընկերությունը սույն Կանոնակարգի 3.5-3.11 կետերով նախատեսված գործողությունները կիրականացնի նաև այն դեպքում, երբ գործարար հարաբերություն հաստատելուց կամ գործարքը կատարելուց հետո կասկածներ առաջանան հաճախորդի նույնականացմանը վերաբերող՝ նախկինում ձեռք բերված տեղեկությունների հավաստիության կամ ամբողջականության վերաբերյալ, ինչպես նաև եթե կասկածներ առաջանան փողերի լվացման կամ ահաբեկչության **կամ զանգվածային ոչնչացման զենքի տարածման** ֆինանսավորման վերաբերյալ:

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁ ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՈՒՄԸ

3.5. Ֆիզիկական անձ հաճախորդները հաշվի բացման համար պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը և տեղեկությունները.

ա) անձը հաստատող փաստաթուղթ կամ բացառապես լուսանկարով՝ պաշտոնական այլ փաստաթուղթ (անձնագիր, անհատականացման քարտ), որը պետք է ունենա **MRZ (սարքային ընթերցման տիրույթ)՝ համապատասխանության ստուգումներ իրականացնելու համար:**,

բ) անձի բնակության հասցեն փաստող՝ **երրորդ անձի կողմից տրամադրված փաստաթուղթ**, մասնավորապես, հաճախորդի վերաբերյալ բանկային տեղեկանք կամ բանկի **հաշվի** քաղվածքը, կոմունալ ծառայությունների համար կատարվող վճարման քաղվածք, որտեղ հստակ երևում է անունը, ազգանունը և նրա բնակության հասցեն, ինչպես նաև սույն կետի պահանջներին բավարարող այլ փաստաթուղթ: Սույն կետով ներկայացվող փաստաթուղթը պետք է լինի տրամադրված ոչ շուտ, քան **Ընկերության այն ներկայացնելուն նախորդող 3 ամիսների ընթացքում:**

Սույն կետի պահանջը չի գործում այն դեպքերում, երբ հաճախորդի՝ անձը հաստատող փաստաթուղթը պարունակում է տեղեկատվություն նրա բնակության վայրի մասին:

info@equiti.am | 5 Baghramyan Street, Apt 11, 0019, Yerevan, Republic of Armenia | +374 10.580972

Equiti AM CJSC ("Equiti AM") is Authorised and Regulated by the Central Bank of Armenia (License Number 0011). Registered office at 5 Baghramyan Street, Apt 11, 0019, Yerevan, Republic of Armenia

Էքուիթի ԷՅ ԷՄ ՓԲԸ ("Էքուիթի ԷՅ ԷՄ") Լիցenzաված է և Կանոնակարգվում է ՀՀ Կենտրոնական Բանկի կողմից (Լիցենզիայ N 0011).
Չասցե՝ Բաղրամյան 5. բնակարան 11, 0019, Երևան, Հայաստանի Հանրապետություն

բ) տեղեկատվություն՝ անձի գործարար բնութագրի, գործարար հարաբերության նպատակի և նախատեսվող բնույթի վերաբերյալ,

գ) **տեղեկատվություն՝ անձի գործարար բնութագրի, գործարար հարաբերության նպատակի և նախատեսվող բնույթի վերաբերյալ,**

դ) ՀՀ ռեզիդենտ չհանդիսացող ֆիզիկական անձի համար՝ կենսական շահերի կենտրոնի մասին տեղեկատվություն,

ե) իրական շահառուի առկայության կամ բացակայության մասին հայտարարություն, իրական շահառուի առկայության դեպքում՝ սույն կետի ա-դ ենթակետերում նշված փաստաթուղթը և տեղեկատվությունները,

զ) տեղեկատվություն, թե արդյոք անձը հանդես է գալիս իր անունից թե ուրիշի անունից: այլ անձի անունից հանդես գալու դեպքում՝ լիազորությունները հաստատող փաստաթուղթը և լիազորող անձի վերաբերյալ սույն կետի ա-դ ենթակետերում նշված փաստաթուղթը և տեղեկությունները,

3.6. Սույն կետին համապատասխան ներկայացված փաստաթղթերը պետք է լինեն վավերականության ժամկետում:

3.7. Սույն կետն ուժը կորցրած ճանաչել:

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁ ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՈՒՄԸ

3.8. Իրավաբանական անձ հաճախորդները հաշվի բացման համար պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերի բնօրինակները և տեղեկությունները.

ա) պետական գրանցման փաստաթուղթը կամ գրանցման վերաբերյալ այլ պաշտոնական փաստաթղթերը, որոնք առնվազն պետք է ներառեն իրավաբանական անձի անվանումը, գտնվելու վայրը, անհատականացման համարը (պետական գրանցման, հաշվառման

համարը և այլն), գործադիր մարմնի ղեկավարի անունը և առկայության դեպքում՝ հարկ վճարողի հաշվառման համարը,

բ) Ընկերության կանոնադրությունը կամ կառավարման մարմինների լիազորությունների վերաբերյալ այլ փաստաթուղթ,

գ) իրական շահառուի վերաբերյալ (բացառությամբ արժեթղթերի շուկայի կարգավորման օրենսդրությամբ նախատեսված հաշվետու թողարկողների) տեղեկատվությունը, ինչպես նաև իրական շահառուի վերաբերյալ սույն Կանոնակարգի 3.5-րդ կետի **ա-բ** կետերով նախատեսված փաստաթղթերը,

դ) Ընկերության անունից հանդես եկող անձի լիազորությունները հաստատող փաստաթուղթը, ինչպես նաև ընկերության անունից հանդես եկող անձի վերաբերյալ սույն Կանոնակարգի 3.5-րդ կետի **ա-դ** կետերով նախատեսված փաստաթղթերը և տեղեկատվությունը,

ե) տեղեկատվություն՝ իրավաբանական անձի գործարար բնութագրի, գործարար հարաբերության նպատակի և նախատեսվող բնույթի վերաբերյալ,

զ) հաճախորդի փաստացի գործունեության հասցեն,

է) ՀՀ ռեզիդենտ չհանդիսացող իրավաբանական անձի կամ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող կազմակերպության համար՝ կենսական շահերի կենտրոնի մասին տեղեկատվություն:

3.9. Սույն կետն ուժը կորցրած ճանաչել:

3.10. Պետական մարմնի կամ տեղական ինքնակառավարման մարմնի կողմից հաշիվ բացելու դեպքում պետական մարմնի կամ տեղական ինքնակառավարման մարմնի կողմից պետք է ներկայացվի պետական մարմնի կամ տեղական ինքնակառավարման մարմնի լրիվ պաշտոնական անվանումը և երկիրը:

ԱՌԱՆՅ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿՑԻ ՀԵՏ ԱՆՄԻՋԱՊԵՍ ԱՌԵՐԵՍ ՇՓՄԱՆ ՀԱՇԻՎ ԲԱՅԵԼՈՒ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

3.11. Այն դեպքերում, երբ հաճախորդը հաշիվը ցանկանում է բացել առանց Ընկերության սպասարկող աշխատակիցների հետ առերես շփման՝ առցանց դիմում լրացնելով, Հաճախորդը կայքէջում հաշվի բացման դիմումը լրացնելիս կներբեռնի սույն Կանոնակարգի 3.5-րդ 3.8-րդ կետերով պահանջվող փաստաթղթերի էլեկտրոնային տարբերակը:

3.12. Անձին նույնականացնելիս Ընկերությունը կարող է օգտվել անձի ինքնությունը հաստատող էլեկտրոնային համակարգերից կամ անձի իքնությունը հաստատող փաստաթղթի վավերականությունը ստուգող համակարգերից (այսուհետ՝ ԻՀԷՀ): Նմանատիպ համակարգերը համապարփակ և վստահելի տեղեկատվություն են պարունակում որոշ երկրների քաղաքացիների, այդ երկրներում աշխատանքի իրավունք ունեցող կամ մշտական բնակության իրավունք ունեցող քաղաքացիների և նրանց փաստաթղթերի վավերականության և պատշաճության մասին: Դրանք են, մասնավորապես, ընտրողների ցուցակները, որոնք վարվում են տվյալ երկրի պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից, վարկային ռեգիստրները, սոցիալական ապահովության համարները, վստահության միջազգային բարձր ցուցանիշ ունեցող կազմակերպությունների կողմից վարվող համակարգերը և այլն: Ընկերության կողմից օգտագործվող համակարգը ներկայացված է սույն Կանոնակարգի Հավելված 1-ում:

3.13. Իրավաբանական անձ հաճախորդի պետական գրանցման փաստաթղթի կամ պաշտոնական այլ փաստաթղթերի հիման վրա ձեռք բերվող տեղեկությունները պաշտոնական հանրամատչելի աղբյուրներից չհայտնաբերելու կամ դրանց նույնականացման վերաբերյալ կասկածներ առաջանալու դեպքում փաստաթղթերը պետք է ներկայացվեն նոտարական կարգով վավերացված և/կամ իրավասու պաշտոնատար անձի կողմից ապոստիլով հաստատված,

info@equiti.am | 5 Baghramyan Street, Apt 11, 0019, Yerevan, Republic of Armenia | +374 10.580972

Equiti AM CJSC ("Equiti AM") is Authorised and Regulated by the Central Bank of Armenia (License Number 0011). Registered office at 5 Baghramyan Street, Apt 11, 0019, Yerevan, Republic of Armenia

Էքուիթի ԷՅ ԷՄ ՓԲԸ ("Էքուիթի ԷՅ ԷՄ") Լիզորված է և Կանոնակարգվում է ՀՀ Կենտրոնական Բանկի կողմից (Լիցենզիայ N 0011).

Չասցե՝ Բաղրամյան 5. բնակարան 11, 0019, Երևան, Հայաստանի Հանրապետություն

3.14. Այն դեպքում, երբ սույն Կանոնակարգի 3.12-րդ կետով նախատեսված կարգով ԻՀԷՀ միջոցով ստուգում իրականացնելիս հաճախորդի տվյալները չեն հայտնաբերվում կամ կասկածներ են առաջանում հաճախորդի նույնականացման վերաբերյալ, Ընկերությունը կպահանջի հաճախորդից սույն Կանոնակարգի 3.5-րդ և 3.8-րդ կետերին համապատասխան փաստաթղթերի՝ տվյալ օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված պատճենները և անհրաժեշտության դեպքում դրանց հաստատված թարգմանությունները ներկայացնել Ընկերությանը: Ընկերության ՓԼ/ԱՖ պատասխանատուն տվյալ հաճախորդի պատշաճ ուսումնասիրության դեպքում այնուամենայնիվ պետք է հաշվի առնի այն հանգամանքը, որ տվյալ անձի մասին տեղեկատվությունը բացակայում էր ԻՀԷՀ-ում կամ կասկածներ են առաջացել նրա նույնականացման վերաբերյալ և իրականացնի տվյալ հաճախորդի հավելյալ պատշաճ ուսումնասիրություն:

3. 15. Առանց առերես շփման գործարար հարաբերություններ հաստատելիս Ընկերությունը պետք է պահանջի նաև, որպեսզի առաջին վճարումը կատարվի Օրենքի 16-րդ հոդվածի 8-րդ մասի 3-րդ կետի ա-գ ենթակետերով սահմանված պահանջներին բավարարող ֆինանսական հաստատությունում հաճախորդի անվամբ բացված հաշվով:

3.16. Սույն գլխով նախատեսված անձի նույնականացման գործողությունների իրականացնելիս Ընկերությունը կարող է հիմք ընդունել այլ ֆինանսական կամ ոչ ֆինանսական հաստատության կամ անձի կողմից հաճախորդի պատշաճ ուսումնասիրության արդյունքում ստացված տվյալները՝ պայմանով, որ առկա են բոլոր հետևյալ հանգամանքները.

ա) Ընկերությունը վերջնական պատասխանատվություն է կրում հաճախորդի պատշաճ ուսումնասիրության համար,

բ) Ընկերությունը պետք է այլ ֆինանսական հաստատությունից կամ ոչ ֆինանսական հաստատությունից անմիջապես ստանա նույնականացման համար անհրաժեշտ տեղեկությունները,

գ) Ընկերությունը պետք է բավարար միջոցներ ձեռնարկի հավաստիանալու, որ այլ ֆինանսական հաստատությունը կամ ոչ ֆինանսական հաստատությունը՝

i) իրավասու է և կարող է ըստ պահանջի անմիջապես տրամադրել հաճախորդի պատշաճ ուսումնասիրության արդյունքում ձեռք բերված տեղեկությունները, ներառյալ՝ փաստաթղթերի պատճենները,

ii) փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի տեսանկյունից ենթակա է պատշաճ կարգավորման և վերահսկողության,

iii) չի գտնվում կամ չի բնակվում չհամապատասխանող երկրում կամ տարածքում կամ չհամապատասխանող երկրներից կամ տարածքներից չէ:

4. ՀԱՃԱԽՈՐԴԻ ՊԱՏՇԱԾ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ

4.1. Ընկերության կողմից հաճախորդի՝ հաշիվ բացելու վերաբերյալ դիմումը և անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը ստանալուց հետո Ընկերության ՓԼ/ԱՖ պատասխանատուն ոչ ուշ, քան երեք օրվա ընթացքում իրականացնում է հաճախորդի պատշաճ ուսումնասիրությունը, որի նպատակն է հաճախորդի վերաբերյալ պատշաճ պատկերացում կազմելը, նրա ինքնության և գործարար բնութագրի վերաբերյալ ռիսկերի վրա հիմնված մոտեցման կիրառմամբ տեղեկատվություն ստանալն ու վերլուծելը: ՓԼ/ԱՖ պատասխանատուն, կախված հաճախորդի ռիսկայնության դասից, կարող է իրականացնել հետևյալ տեսակի պատշաճ ուսումնասիրություն.

ա) Ստանդարտ պատշաճ ուսումնասիրություն;

բ) Հավելյալ պատշաճ ուսումնասիրություն;

info@equiti.am | 5 Baghramyan Street, Apt 11, 0019, Yerevan, Republic of Armenia | +374 10.580972

Equiti AM CJSC ("Equiti AM") is Authorised and Regulated by the Central Bank of Armenia (License Number 0011). Registered office at 5 Baghramyan Street, Apt 11, 0019, Yerevan, Republic of Armenia

Էքուիթի ԷՅ ԷՄ ՓԲԸ ("Էքուիթի ԷՅ ԷՄ") Լիազորված է և Կանոնակարգվում է ՀՀ Կենտրոնական Բանկի կողմից (Լիցենզիայ N 0011).

Չասցե՝ Բաղրամյան 5. քնակարան 11, 0019, Երևան, Հայաստանի Հանրապետություն

գ) Պարզեցված պատշաճ ուսումնասիրություն:

4.2 Ընկերությունը կարող է չիրականացնել հաճախորդի պատշաճ ուսումնասիրություն, բացառությամբ նույնականացման և ինքնության ստուգման, եթե առկա են կասկածներ փողերի լվացման կամ ահաբեկչության ֆինանսավորման վերաբերյալ, և ՓԼ/ԱՖ պատասխանատուն ողջամտորեն կարծում է, որ հաճախորդի պատշաճ ուսումնասիրություն իրականացնելը կհանգեցնի հաճախորդին իր կասկածների բացահայտմանը: Այս դեպքում Ընկերությունը սահմանված կարգով կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվություն է տրամադրում լիազոր մարմնին:

5. ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ

5.1. Հաճախորդի նույնականացման փուլից հետո ՓԼ/ԱՖ պատասխանատուն դասակարգում է տվյալ հաճախորդին հետևյալ ռիսկայնության կատեգորիաներում.

- ա) Բարձր ռիսկի հաճախորդ;
- բ) Միջին ռիսկի հաճախորդ;
- գ) Ցածր ռիսկի հաճախորդ:

5.2. Տարբեր ռիսկերի համար բնութագրական մի քանի չափանիշների միաժամանակյա առկայության դեպքում ռիսկը գնահատվում է առկա չափանիշներից առավել բարձր ռիսկայինին համապատասխան, բացառությամբ **ՀՀ օրենսդրությամբ** նախատեսված դեպքերի:

ԲԱՐՁՐ ՌԻՍԿԻ ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԸ

info@equiti.am | 5 Baghramyan Street, Apt 11, 0019, Yerevan, Republic of Armenia | +374 10.580972

Equiti AM CJSC ("Equiti AM") is Authorised and Regulated by the Central Bank of Armenia (License Number 0011). Registered office at 5 Baghramyan Street, Apt 11, 0019, Yerevan, Republic of Armenia

Էքուիթի ԷՅ ԷՄ ՓԲԸ ("Էքուիթի ԷՅ ԷՄ") Լիազորված է և Կանոնակարգվում է ՀՀ Կենտրոնական Բանկի կողմից (Լիցենզիայ N 0011).
Չասցե՝ Բաղրամյան 5. բնակարան 11, 0019, Երևան, Հայաստանի Հանրապետություն

5.3. Հաճախորդը կարող է դասակարգվել բարձր ռիսկի հաճախորդների կատեգորիայում, եթե առկա է հետևյալ չափանիշներից առնվազն մեկը, բացառությամբ սույն կարգի 5.4-րդ կետում նշված դեպքի.

ա) Հաճախորդը, նրա լիազորված անձը կամ իրական շահառուն (այսուհետ՝ անձը) հանդիսանում է քաղաքական ազդեցություն ունեցող անձ, նրա ընտանիքի անդամ կամ նրա հետ այլ կերպ փոխկապակցված անձ (հայր, մայր, ամուսին, տատ, պապը, քույրը, եղբայր, երեխաներ, ամուսնու ծնողներ);

բ) Անձը (ներառյալ՝ ֆինանսական հաստատությունները) գտնվում կամ բնակվում է չհամապատասխանող կամ բարձր ռիսկայնության երկրներում կամ տարածքներում, կամ այդպիսի երկրում ունի կենսական շահերի կենտրոն կամ հանդիսանում է այդպիսի երկրի քաղաքացի կամ այդպիսի երկրում մշտական բնակության իրավունք ունի: Չհամապատասխանող կամ բարձր ռիսկայնության երկրների ցանկը ներկայացված է սույն Կանոնակարգի Հավելված 2-ում;

գ) Անձը իրականացնում է բարդ կամ անսովոր մեծ գումարով գործարքներ;

դ) Անձը իրականացնում է անսովոր պայմաններով գործարքներ կամ գործարար հարաբերություններ, որոնց տնտեսական կամ այլ իրավաչափ նպատակներն ակնհայտ չեն;

ե) Անձը հանդիսանում է իրավաբանական անձ կամ կազմավորում, որի գործունեության ոլորտը ակտիվների անհատական տնօրինումն է;

զ) Անձը հանդիսանում է անվանական բաժնետերեր կամ ըստ ներկայացնողի բաժնետոմսեր ունեցող ընկերություն;

է) Անձի բիզնեսները կամ գործարար հարաբերությունները բնութագրվում են կանխիկի լայնամասշտաբ կիրառությամբ;

- ը) Իրավաբանական անձը ունի սեփականատերերի արտասովոր կամ անհարկի բարդ կազմ;
- թ) Անձը կամ անձի օգտին մատուցվում են անհատականացված բանկային ծառայություններ;
- ժ) Անձը իրականացնում է առանց առերես շփման գործարք կամ գործարար հարաբերություն;
- ժա) Ցանկացած այլ դեպքում, որը վկայում է փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման բարձր հավանականության մասին:

5.4. Հաճախորդը չի դասակարգվի բարձր ռիսկայնության կատեգորիայում, անկախ սույն Կանոնակարգի 5.3-րդ կետում նախատեսված բարձր ռիսկի հանգամանքների ի հայտ գալուց, եթե.

- ա) Անձը կնքում է կյանքի ապահովագրության պայմանագրեր, որոնց դեպքում տարեկան ապահովագրավճարը չի գերազանցում նվազագույն աշխատավարձի չորսհարյուրապատիկը կամ միանվագ ապահովագրավճարը չի գերազանցում նվազագույն աշխատավարձի հազարապատիկը,
- բ) Անձը կենսաթոշակային համակարգերի շրջանակներում կնքում է ապահովագրության պայմանագրեր, եթե դրանք չեն պարունակում հրաժարման դրույթ և պայմանագիրը չի կարող օգտագործվել որպես գրավի առարկա,
- գ) Անձը Հայաստանի Հանրապետության պետական կամ համայնքի բյուջե կատարում է վճարումներ,
- դ) Անձը կատարում է հանրային ծառայությունների դիմաց վճարումներ, պայմանով, որ այդ վճարների չափը չի գերազանցում նվազագույն աշխատավարձի հազարապատիկը,

ե) Անձը ստանում է աշխատավարձի, կենսաթոշակային կամ հայտնի աղբյուրներից ստացվող սոցիալական նպաստների հետ կապված վճարումներ, պայմանով, որ այդ վճարների չափը չի գերազանցում նվազագույն աշխատավարձի հազարապատիկը:

5.5. Սույն Կանոնակարգի 5.3 -րդ կետում նշված հանգամանքների ի հայտ գալու դեպքում, գործարար հարաբերություն հաստատելուց առաջ, գործարար հարաբերությունը շարունակելու համար, ինչպես նաև այն դեպքերում, երբ հետագայում պարզվում է, որ հաճախորդը կամ իրական շահառուն բնութագրվում է բարձր ռիսկի չափանիշով կամ գործարքը կամ գործարար հարաբերությունը ներառում է այդպիսի չափանիշ, անհրաժեշտ է ստանալ Ընկերության ավագ ղեկավարության համաձայնությունը:

5.6. Գործարար հարաբերություն հաստատելիս կամ գործարք կատարելիս, սույն Կանոնակարգի 5.3. -րդ կետում նշված հանգամանքներից որևէ մեկն ի հայտ գալու դեպքում, ՓԼ/ԱՖ պատասխանատուն պարտավոր է իրականացնել հավելյալ պատշաճ ուսումնասիրություն, որը կներառի առնվազն հետևյալ գործողությունները.

ա) հաճախորդի եկամուտների և ունեցվածքի աղբյուրը պարզելու համար անհրաժեշտ միջոցառումների ձեռնարկում՝ ներառյալ սահմանափակ հասանելիություն ունեցող համակարգերից օգտվելու, պետական լիազոր մարմինն հարցում ուղարկելու և պետական այլ մարմինների հետ համագործակցելու, ինչպես նաև հաճախորդի ունեցվածքի աղբյուրը պարզելուն ուղղված համապատասխան հարացաթերթիկ լրացնելու կամ առցանց դիմումի մեջ այդ հարցերին պատասխանելու պահանջներ ներկայացնելու միջոցով,

բ) գործարքի կամ գործարար հարաբերության նախապայմանների և նպատակի հնարավորին չափ մանրամասն ուսումնասիրում,

գ) այլ գործողություններ, որոնք տվյալ պահին կարող են անհրաժեշտ լինել բարձր ռիսկի չափանիշի առնչությամբ տեղեկատվություն ստանալու համար:

ՑԱԾԻ ՌԻՍԿԻ ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԸ

info@equiti.am | 5 Baghramyan Street, Apt 11, 0019, Yerevan, Republic of Armenia | +374 10.580972

Equiti AM CJSC ("Equiti AM") is Authorised and Regulated by the Central Bank of Armenia (License Number 0011). Registered office at 5 Baghramyan Street, Apt 11, 0019, Yerevan, Republic of Armenia

Էքուիթի ԵՅ ԷՄ ՓԲԸ ("Էքուիթի ԵՅ ԷՄ") Լիազորված է և Կանոնակարգվում է ՀՀ Կենտրոնական Բանկի կողմից (Լիցենզիայ N 0011).

Հասցե՝ Բաղրամյան 5. քնակարան 11, 0019, Երևան, Հայաստանի Հանրապետություն

5.7. Հաճախորդը կարող է ցածր ռիսկի կատեգորիայի դասվել բացառապես հետևյալ չափանիշների առկայության դեպքում.

ա) Անձը հանդիսանում է փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի տեսանկյունից արդյունավետորեն վերահսկվող ֆինանսական հաստատություն,

բ) Անձը հանդիսանում է պետական մարմին, տեղական ինքնակառավարման մարմին, պետական ոչ առևտրային կազմակերպություն, պետական կառավարչական հիմնարկ, եթե դրանք չեն գտնվում չհամապատասխանող երկրներում կամ տարածքներում,

գ) Անձը կնքում է կյանքի ապահովագրության պայմանագրեր, որոնց դեպքում տարեկան ապահովագրավճարը չի գերազանցում նվազագույն աշխատավարձի չորսհարյուրապատիկը կամ միանվագ ապահովագրավճարը չի գերազանցում նվազագույն աշխատավարձի հազարապատիկը,

դ) Անձը կեսաթոշակային համակարգերի շրջանակներում կնքում է ապահովագրական պայմանագրեր, եթե դրանք չեն պարունակում հրաժարման մասին դրույթ և պայմանագիրը չի կարող օգտագործվել որպես գրավի առարկա,

ե) Անձը Հայաստանի Հանրապետության պետական կամ համայնքային բյուջեներ կատարում է վճարումներ,

զ) Անձը հանրային ծառայությունների դիմաց կատարում է վճարումներ,

է) Անձը ստանում է աշխատավարձի, կենսաթոշակի կամ հայտնի աղբյուրներից սոցիալական նպաստների հետ կապված վճարումներ:

5. 8. Հաճախորդը դասակարգվում է ցածր ռիսկայնության կատեգորիայում, եթե.

ա) Առկա են միայն ցածր ռիսկի չափանիշներ;

բ) Առկա է միջին ռիսկի որևէ չափանիշ, սակայն կատարվում է սույն կարգի 5.7-րդ կետի գ-է ենթակետերով նախատեսված ցածր ռիսկի գործարք,

գ) Առկա է բարձր ռիսկի որևէ չափանիշ, սակայն կատարվում է սույն Կանոնակարգի 5.7-րդ կետի գ-է ենթակետերով նախատեսված ցածր ռիսկի գործարք կամ սույն

Կանոնակարգի 5.7-րդ կետի գ-է ենթակետերով նախատեսված ցածր ռիսկի գործարք, որի արժեքը չի գերազանցում նվազագույն աշխատավարձի հազարապատիկը:

5.9. Ցածր ռիսկի կատեգորիայում դասակարգված հաճախորդների նկատմամբ իրականացվում է պարզեցված պատշաճ ուսումնասիրություն, որի շրջանակներում նույնականացում և ինքնության ստուգում իրականացնելիս հավաքվում են հետևյալ տեղեկությունները.

ա) Ֆիզիկական անձի համար՝ անունը, ազգանունը և անձը հաստատող փաստաթղթի տվյալները,

բ) Իրավաբանական անձի համար՝ անվանումը և անհատականացման համարը (պետական գրանցման, հաշվառման համարը և այլն),

գ) Պետական մարմնի և տեղական ինքնակառավարման մարմնի համար՝ լրիվ պաշտոնական անվանումը:

ՄԻՋԻՆ ՌԻՍԿԻ ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԸ

5.10. Եթե բացակայում են սույն կարգով նախատեսված ցածր կամ բարձր ռիսկի չափանիշները, ռիսկի կատեգորիան գնահատվում է միջին:

Բարձր ռիսկի չափանիշ համարվող՝ առանց առերես շփման գործարք կամ գործարար հարաբերություն հաստատելու առկայության դեպքում ՓԼ/ԱՖ պատասխանատուն ռիսկը կարող է գնահատել միջին՝ եթե համապարփակ և փաստաթղթավորված վերլուծության արդյունքում հանգում է հիմնավոր եզրակացության, որ այդ ռիսկերը արդյունավետորեն կառավարվում են և զսպված են:

5. 11. Ռիսկայնության միջին կատեգորիայում դասակարգված հաճախորդների վերաբերյալ ՓԼ/ԱՖ պատասխանատուն իրականացնում է ստանդարտ պատշաճ ուսումնասիրություն:

5.12. Ստանդարտ պատշաճ ուսումնասիրությունը ներառում է.

info@equiti.am | 5 Baghramyan Street, Apt 11, 0019, Yerevan, Republic of Armenia | +374 10.580972

Equiti AM CJSC ("Equiti AM") is Authorised and Regulated by the Central Bank of Armenia (License Number 0011). Registered office at 5 Baghramyan Street, Apt 11, 0019, Yerevan, Republic of Armenia

Էքուիթի ԷՅ ԷՄ ՓԲԸ ("Էքուիթի ԷՅ ԷՄ") Լիցզորված է և Կանոնակարգվում է ՀՀ Կենտրոնական Բանկի կողմից (Լիցենզիայ N 0011).

Չասցե՝ Բաղրամյան 5. քնակարան 11, 0019, Երևան, Հայաստանի Հանրապետություն

- ա) Հաճախորդի նույնականացումը և ինքնության ստուգումը;
- բ) Հաճախորդի գործարար բնութագրի վերաբերյալ տեղեկատվության հավաքումը;
- գ) Գործարար հարաբերության կամ գործարքի նպատակի և նախատեսվող բնույթի պարզումը;

5.13. Սույն գլխով նախատեսված գործողությունները կատարելիս Ընկերության ՓԼ/ԱՖ պատասխանատուն պետք է պարզի, թե արդյոք առկա են իրական շահառուներ: Ընդ որում, ՓԼ/ԱՖ պատասխանատուն պարտավոր է այն պարզել անկախ նրանից, թե հաճախորդը հաշիվ բացելու դիմումի մեջ նշել է իրական շահառուի մասին, թե ոչ:

5.14. Իրական շահառուին պարզելու համար, մասնավորապես, ՓԼ/ԱՖ պատասխանատուն պետք է ուսումնասիրի հետևյալ հարցերը

- ա) Ով է հանդիսանում հաճախորդի 25 տոկոսից ավելի բաժնետոմսերի (բաժնեմասի) սեփականատերը,
- բ) Ովքեր իրավունք ունեն հաճախորդին պարտադիր կատարման հանձնարարություններ տալ (պահանջի կամ միմյանց միջև կնքված պայմանագրի ուժով կամ այլ հիմքերով),
- գ) Ում հետ տվյալ հաճախորդն ունի տնտեսական ընդհանուր շահեր:

5.15. Վերը շարադրված միջոցառումներից հետո, եթե ՓԼ/ԱՖ պատասխանատուն չի հայտնաբերում կասկածելի գործարքի չափանիշներ, համապատասխան դասակարգմամբ համաձայնություն է տալիս հաճախորդի համար հաշվի բացմանը: Այդ համաձայնությունը էլեկտրոնային եղանակով ուղարկվում է հաճախորդի սպասարկումն իրականացնող աշխատակցին: Հաճախորդի դասակարգման աստիճանը պարտադիր նշվում է հաճախորդների հետ հարաբերությունների կառավարման ընկերության համակարգերում:

6. ՀԱՃԱԽՈՐԴԻ ԱՆԸՆԴՀԱՏ ՊԱՏՇԱՃ ՌԻՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ

info@equiti.am | 5 Baghramyan Street, Apt 11, 0019, Yerevan, Republic of Armenia | +374 10.580972

Equiti AM CJSC ("Equiti AM") is Authorised and Regulated by the Central Bank of Armenia (License Number 0011). Registered office at 5 Baghramyan Street, Apt 11, 0019, Yerevan, Republic of Armenia

Էքուիթի ԷՅ ԷՄ ՓԲԸ ("Էքուիթի ԷՅ ԷՄ") Լիազորված է և Կանոնակարգվում է ՀՀ Կենտրոնական Բանկի կողմից (Լիցենզիայ N 0011).
Չասցե՝ Բաղրամյան 5. քնակարան 11, 0019, Երևան, Հայաստանի Հանրապետություն

6.1. Հաճախորդներին համապատասխան կատեգորիաներում դասակարգելուց հետո ՓԼ/ԱՖ պատասխանատուն, գործարար հարաբերությունների ամբողջ ընթացքում, ըստ յուրաքանչյուր դասի հաճախորդի իրականացնում է հաճախորդների ընթացիկ ուսումնասիրություն:

6.2. Ընթացիկ պատշաճ ուսումնասիրությունը ներառում է հաշվետվություն տրամադրող անձի կողմից հաճախորդի հետ գործարքների դիտանցումը՝ հաճախորդի, նրա գործարար բնութագրի և ռիսկայնության վերաբերյալ առկա տեղեկությունների հավաստիության, այդ տեղեկությունների հետ հաճախորդի գործունեության համադրելիության, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև հաճախորդի եկամուտների և ունեցվածքի աղբյուրի իսկության հարցում հավաստիանալու նպատակով:

6.3. Բարձր ռիսկի կատեգորիայի հաճախորդների ընթացիկ պատշաճ ուսումնասիրությունը ներառում է.

- ա) գործարքի կամ գործարար հարաբերության առնչությամբ հաճախորդից պահանջվող տեղեկությունների (ներառյալ՝ փաստաթղթերի) իսկությունը և հավաստիությունը ստուգելիս պահանջում է անհրաժեշտ տեղեկություններ (ներառյալ՝ լրացուցիչ փաստաթղթեր), օգտվում է տեղեկատվության սահմանափակ մատչելիությամբ և հանրամատչելի աղբյուրներից, կատարում է հարցումներ հնարավոր մեծ թվով իրավասու մարմինների և այլ հաշվետու անձանց, ինչպես նաև օտարերկրյա գործընկերներին,
- բ) հաճախորդի՝ տարբեր գործարքներով շրջանառող միջոցների աղբյուրները, շարժը և ծավալները համադրելիս ընտրում է հնարավորին ավելի երկար կամ մի քանի համադրելի միավոր ժամանակահատված,
- գ) հաճախորդների, գործարքների և գործարար հարաբերությունների միջև կապերի առկայությունը պարզելիս կատարում է դրանց բազմաստիճան վերլուծություն, այդ թվում՝ հնարավոր անուղղակի կապերը բացահայտելու նպատակով,

դ) հաճախորդի գործարար բնութագրին որևէ գործարքի կամ գործարար հարաբերության համադրելիությունը ստուգելիս պահանջում է դրանց շրջանակներում կատարված գործողությունները լիարժեքորեն հիմնավորող տեղեկություններ (ներառյալ՝ փաստաթղթեր),

ե) հաճախորդի եկամուտների և ունեցվածքի աղբյուրը պարզելիս պահանջում է դրանց օրինականությունը հիմնավորող տեղեկություններ (ներառյալ՝ փաստաթղթեր),

զ) ձեռնարկում է ներքին իրավական ակտերով սահմանված այլ գործողություններ:

6.4. Քաղաքական ազդեցություն ունեցող անձի դեպքում, գործարար հարաբերության ամբողջ ընթացքում Ընկերության ՓԼ/ԱՖ պատասխանատուն կիրականացնի ընթացիկ հավելյալ դիտարկում:

6.5. Միջին ռիսկայնության կատեգորիայում դասակարգվող հաճախորդների առնչությամբ ՓԼ/ԱՖ պատասխանատուն, ընթացիկ պատշաճ ուսումնասիրություն իրականացնելիս, ձեռնարկում է առնվազն հետևյալ գործողությունները.

ա) ստուգում է գործարքի կամ գործարար հարաբերության առնչությամբ հաճախորդից պահանջվող տեղեկությունների (ներառյալ՝ փաստաթղթերի) իսկությունը և հավաստիությունը՝ անհրաժեշտության դեպքում օգտվելով տեղեկատվության սահմանափակ մատչելիությամբ և հանրամատչելի աղբյուրներից, կատարելով հարցումներ իրավասու մարմիններին և այլ հաշվետու անձանց, ինչպես նաև օտարերկրյա գործընկերներին,

բ) համադրում է հաճախորդի՝ միավոր ժամանակահատվածում տարբեր գործարքներով շրջանառող միջոցների աղբյուրները, շարժը և ծավալները,

գ) պարզում է հաճախորդների, գործարքների և գործարար հարաբերությունների միջև կապերի առկայությունը,

դ) ստուգում է գործարքի կամ գործարար հարաբերության համադրելիությունը հաճախորդի գործարար բնութագրին,

info@equiti.am | 5 Baghramyan Street, Apt 11, 0019, Yerevan, Republic of Armenia | +374 10.580972

Equiti AM CJSC ("Equiti AM") is Authorised and Regulated by the Central Bank of Armenia (License Number 0011). Registered office at 5 Baghramyan Street, Apt 11, 0019, Yerevan, Republic of Armenia

Էքուիթի ԷՅ ԷՄ ՓԲԸ ("Էքուիթի ԷՅ ԷՄ") Լիազորված է և Կանոնակարգվում է ՀՀ Կենտրոնական Բանկի կողմից (Լիցենզիայ N 0011).

Ջաստե՝ Բաղրամյան 5. քնակարան 11, 0019, Երևան, Հայաստանի Հանրապետություն

ե) ներքին իրավական ակտով սահմանված դեպքում՝ պարզում է հաճախորդի եկամուտների և ունեցվածքի աղբյուրը,

զ) ձեռնարկում է ներքին իրավական ակտերով սահմանված այլ միջոցառումներ:

6.6. Յաճախ ռիսկայնությամբ հաճախորդների ընթացիկ պատշաճ ուսումնասիրության ընթացքում ՓԼ/ԱՖ պատասխանատուն ձեռնարկում է հետևյալ գործողությունները.

ա) Ստուգում է գործարքի կամ գործարար հարաբերության առնչությամբ հաճախորդից պահանջվող տեղեկությունների (ներառյալ՝ փաստաթղթերի) իսկությունը և հավաստիությունը՝ հիմք ընդունելով հաճախորդի տրամադրած տեղեկատվությունը,

բ) Համադրում է հաճախորդի՝ միավոր ժամանակահատվածում տարբեր գործարքներով շրջանառող միջոցների աղբյուրները, շարժը և ծավալները միայն այն դեպքում, երբ դրանք գերազանցում են հաճախորդի գործարար բնութագրի տեսանկյունից ողջամիտ գումարային սահմանաչափը,

գ) Պարզում է հաճախորդների, գործարքների և գործարար հարաբերությունների միջև կապերի առկայությունը միայն այն դեպքում, երբ ի հայտ են եկել միջին (ստանդարտ) կամ բարձր ռիսկայնության հաճախորդների, գործարքների կամ գործարար հարաբերությունների հետ կապեր:

6.7. Սույն գլխով նախատեսված ընթացիկ պատշաճ ուսումնասիրության շրջանակներում ՓԼ/ԱՖ պատասխանատուն սույն Կանոնակարգի 6.3-րդ և 6.5-րդ կետերի b և c ենթակետերով նախատեսված միջոցառումները ձեռնարկում է հետևյալ հաճախականությամբ.

ա) Տարին մեկ անգամ՝ միջին (ստանդարտ) ռիսկի դեպքում,

բ) Վեց ամիսը մեկ անգամ՝ բարձր ռիսկի դեպքում, բացառությամբ քաղաքական ազդեցություն ունեցող անձանց դեպքի, որի դեպքում դիտարկումն իրականացվում է ոչ ուշ, քան 3 ամիսը մեկ անգամ:

7. ԳՈՐԾԱՐՔԸ ԿԱՍԿԱԾԵԼԻ ՈՐԱԿԵԼԸ

info@equiti.am | 5 Baghramyan Street, Apt 11, 0019, Yerevan, Republic of Armenia | +374 10.580972

Equiti AM CJSC ("Equiti AM") is Authorised and Regulated by the Central Bank of Armenia (License Number 0011). Registered office at 5 Baghramyan Street, Apt 11, 0019, Yerevan, Republic of Armenia

Էքուիթի ԷՅ ԷՄ ՓԲԸ ("Էքուիթի ԷՅ ԷՄ") Լիազորված է և Կանոնակարգվում է ՀՀ Կենտրոնական Բանկի կողմից (Լիցենզիայ N 0011).

Հասցե՝ Բաղրամյան 5. քնակարան 11, 0019, Երևան, Հայաստանի Հանրապետություն

7.1. Գործարար հարաբերություն հաստատելու ընթացքում, ինչպես նաև հաճախորդի ընթացիկ պատշաճ ուսումնասիրության ընթացքում կասկածելի գործարքների ի հայտ գալու դեպքում ՓԼ/ԱՖ պատասխանատուն հաշվետվություն է ներկայացնում ՀՀ Կենտրոնական բանկին:

7.2. Գործարքը կամ գործարար հարաբերությունը կասկածելի որակելու գործընթացը սկսվում է ինչպես ներքին¹ և արտաքին² ազդակների դեպքում, այնպես էլ ներքին դիտարկումների մարմնի նախաձեռնությամբ:

7.3. Սույն կարգի նպատակներով կասկածելի է որակվում այն գործարքը, երբ բավարար հիմքեր կան կասկածելու, որ գործարքում կամ գործարար հարաբերությունում ներգրավված գույքը ստացվել է հանցավոր ճանապարհով կամ կապված է ահաբեկչության **կամ զանգվածային ոչնչացման զենքի տարածման** ֆինանսավորման հետ, կամ օգտագործվել է կամ առկա է մտադրություն այն օգտագործելու ահաբեկչության նպատակով:

7.4. Դիտարկվող գործարքը պետք է որակվի որպես կասկածելի և սկսվի դիտարկման գործընթաց հետևյալ դեպքերում՝

ա) առկա է հնարավոր համընկնում հաճախորդի կամ գործարքի մյուս կողմի տվյալների և ահաբեկչության **կամ զանգվածային ոչնչացման զենքի տարածման** հետ կապված անձանց կամ լիազոր մարմնի հանձնարարականներում նշված այլ անձանց նույնականացման տվյալների միջև,

բ) դիտարկվող իրավիճակը ամբողջությամբ կամ մասամբ համապատասխանում է կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության չափանիշներին կամ տիպաբանություններին,

¹ Ներքին ազդակներ են համարվում հաճախորդներին սպասարկող ստորաբաժանումների աշխատակիցների, բանկի կառավարման մարմինների, ներքին աուդիտի ստորաբաժանման, փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելման ոլորտում իրավասու այլ աշխատակիցների կողմից ներքին դիտարկումների մարմնին փոխանցված ազդակները:

² Արտաքին ազդակներ են համարվում լիազոր մարմնից, իրավասու մարմիններից, այլ հաշվետու անձանցից, օտարերկրյա գործընկերներից, ինչպես նաև տեղեկատվության սահմանափակ մատչելիությամբ և հանրամատչելի աղբյուրներից ստացված ազդակները:

գ) կնքված կամ առաջարկվող գործարքի կամ գործարար հարաբերության կատարման տրամաբանությունը, շարժը, դինամիկան կամ այլ հանգամանքներ հիմք են տալիս ենթադրելու, որ այն կարող է իրականացվել փողերի լվացման կամ ահաբեկչության ֆինանսավորման նպատակով,

դ) առկա են սույն Կանոնակարգով նախատեսված այլ չափանիշներ:

7.5. Կասկածելի գործարքի չափանիշները սահմանվում են ՀՀ կենտրոնական բանկի կասկածելի գործարքների չափանիշների վերաբերյալ ուղեցույցում:

7.6. Լիազոր մարմնի կողմից անձանց նույնականացման վերաբերյալ հանձնարարականներ ստանալու դեպքում այդ հանձնարարականներն անմիջապես ուղարկվում են հաճախորդների սպասարկում իրականացնող անձնակազմին:

7.7. Կասկածելի գործարքները կամ գործարար հարաբերությունը բացահայտելու համար ՓԼ/ԱՖ պատասխանատուն սերտորեն համագործակցում է հաճախորդների սպասարկում իրականացնող աշխատակիցների հետ: Հաճախորդների անմիջական սպասարկում իրականացնող աշխատակիցները կասկածելի գործարքի չափանիշներ հայտնաբերելու դեպքում պարտավոր են դրա մասին անմիջապես, բայց ոչ ուշ, քան հաջորդ աշխատանքային օրվա մինչև ժամը 10.00 տեղյակ պահել ՓԼ/ԱՖ պատասխանատուին:

7.8. Ծանուցումն ուղարկվում է աշխատանքային էլ. Փոստի միջոցով, որում նշվում է.

ա) Հաճախորդի անունը

բ) Գործարքի բնույթը

գ) Գործարքը կասկածելի համարելու պատճառը:

7.9. Կասկածելի գործարքի վերաբերյալ ՓԼ/ԱՖ պատասխանատուին ծանուցում ուղարկելու դեպքում գործարքի կատարումը կասեցվում է՝ մինչև ՓԼ/ԱՖ պատասխանատուի կողմից վերջնական որոշման կայացումը:

7.10. Այն դեպքում, երբ ՓԼ/ԱՖ պատասխանատուն հաճախորդի հետ աշխատող աշխատակցից ստանում է կասկածելի գործարքի վերաբերյալ ծանուցում, նա իրականացնում է

գործարքի դիտանցում և որոշում է կայացնում հաշվետվություն ներկայացնելու մասին կամ գործարքը կասկածելի չորակելու մասին:

7.11. Սույն Կանոնակարգի 7.10-րդ կետին համապատասխան կայացված որոշման մասին ՓԼ/ԱՖ պատասխանատուն էլեկտրոնային եղանակով ծանուցում է հաճախորդների հետ աշխատող՝ ծանուցում ուղարկած աշխատակցին, ինչպես նաև տեղեկացնում է, թե կասկածելի գործարքի վերաբերյալ հաշվետվություն ներկայացնելու դեպքում գործարքի կատարումը կասեցվել է, թե ոչ:

7.12. Ընկերության ՓԼ/ԱՖ պատասխանատուն, սույն Կանոնակարգի 7.4-րդ կետի a) ենթակետում նշված դեպքում.

ա) Դիտանցման արդյունքում, ահաբեկչության հետ կապված անձանց նույնականացման տվյալների հետ հնարավոր համընկնման դեպքում, ինչպես նաև այն դեպքում, երբ չի հաջողվում հավաստիանալ դրական համընկնման բացակայության հարցում, օրենքով սահմանված կարգով լիազոր մարմնին ներկայացվում է կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվություն;

բ) Լիազոր մարմնի հանձնարարականներում նշված այլ անձանց նույնականացման տվյալների հետ համընկնումներ լինելու դեպքում, հանձնարարականներում նշված ժամկետներում իրականացնում է համապատասխան դիտարկումներ և դրական համընկնման, ինչպես նաև այն դեպքերում, երբ չի հաջողվում հավաստիանալ դրական համընկնման բացակայության հարցում, կատարում է հանձնարարականում նշված գործողությունները:

7.13. Սույն կարգի 7.4-րդ կետի բ-դ կետերում նշված դեպքերում ողջամիտ ժամկետում կատարում է համակողմանի վերլուծություն՝ օգտվելով հաճախորդի պատշաճ ուսումնասիրության շրջանակներում հավաքված և լրացուցիչ ձեռք բերվող տեղեկատվությունից, անհրաժեշտության դեպքում ճշտումներ է անում ՀՀ կենտրոնական բանկի ֆինանսական դիտարկումների կենտրոնի հետ և եթե գործարքը կամ գործարար

հարաբերությունը որակվում է որպես կասկածելի, Օրենքով սահմանված կարգով լիազոր մարմնին ներկայացնում է կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվություն, ինչպես նաև ձեռնարկում է օրենքով նախատեսված այլ միջոցառումներ:

7.14. Այն դեպքում, երբ դիտարկման արդյունքում գործարքը կամ գործարար հարաբերությունը կասկածելի չի որակվում և հաշվետվություն չի ներկայացվում, ապա գործարքը կամ գործարար հարաբերությունը կասկածելի չորակելու վերաբերյալ հիմնավորումները, կատարված եզրահանգումները, վերլուծության ընթացքը և արդյունքները փաստաթղթավորվում ու պահպանվում են Օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

8. ԳՈՐԾԱՐՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԿԱՅԱԳՆԵԼԸ ԵՎ ԳՈՐԾԱՐՔԸ ԿԱՄ ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՍԵՑՆԵԼԸ

8.1. Ընկերության ՓԼ/ԱՖ պատասխանատուն Օրենքով սահմանված կարգով լիազոր մարմնին հաշվետվություն է ներկայացնում.

ա) Անկանխիկ գործարքների դեպքում, որոնց գումարը գերազանցում է 20 միլիոն դրամը, բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի,

բ) Գործարքը կասկածելի որակելու դեպքում:

8.2. Ընկերությունը փողերի լվացման կամ ահաբեկչության ֆինանսավորման կասկածի առկայության դեպքում իրավունք ունի մինչև 5 օրով, իսկ Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով սահմանված հանձնարարականը ստանալու դեպքում պարտավոր է 5 օրով կասեցնել գործարքը կամ գործարար հարաբերությունը և այդ մասին անմիջապես կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության հաշվետվություն տրամադրել լիազոր մարմնին: Գործարքը կասեցնելու մասին ՓԼ/ԱՖ պատասխանատուն անհապաղ ծանուցում է հաճախորդների սպասարկման այն աշխատակցին, ով ներկայացրել էր ծանուցումը:

8.3. Հաշվետվությունը տրամադրվում է CBA/Net համակարգի միջոցով:

info@equiti.am | 5 Baghramyan Street, Apt 11, 0019, Yerevan, Republic of Armenia | +374 10.580972

Equiti AM CJSC ("Equiti AM") is Authorised and Regulated by the Central Bank of Armenia (License Number 0011). Registered office at 5 Baghramyan Street, Apt 11, 0019, Yerevan, Republic of Armenia

Էքուիթի ԷՅ ԷՄ ՓԲԸ ("Էքուիթի ԷՅ ԷՄ") Լիազորված է և Կանոնակարգվում է ՀՀ Կենտրոնական Բանկի կողմից (Լիցենզիայ N 0011).

Չասցե՝ Բաղրամյան 5. քնակարան 11, 0019, Երևան, Հայաստանի Հանրապետություն

8.4. Ընկերությունը պարտավոր է կասեցնել գործարքը կամ գործարար հարաբերությունը մինչև 5 օրով, եթե լիազոր մարմնից ստացվի նման կասեցման պահանջ՝ այդպիսի պահանջ ստանալու պահից անմիջապես:

8.5. Սույն Կանոնակարգի 8.4. -րդ կետում նշված պահանջը ստանալու պահից անմիջապես ուղարկվում է հաճախորդներին սպասարկող աշխատակիցներին:

9. ԳՈՐԾԱՐՔԻ ԿԱՄ ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՄԵՐԺՈՒՄԸ

9.1. Այն դեպքերում, երբ հնարավոր չէ իրականացնել անձի նույնականացումը կամ լիազոր մարմնից գործարքի կամ գործարար հարաբերության իրականացման մերժման հանձնարարականի ստացման դեպքում Ընկերությունը կմերժի գործարքի կամ գործարար հարաբերության իրականացումը և կքննարկի կասկածելի գործարքի վերաբերյալ հաշվետվություն ներկայացնելու հարցը:

9.2. Գործարքի իրականացումը մերժելու մասին որոշումը անմիջապես աշխատանքային էլեկտրոնային փոստի միջոցով ուղարկվում է հաճախորդների սպասարկում իրականացնող աշխատակցին: Աշխատակիցը հաճախորդին հայտնում է գործարքի մերժման մասին ողջամիտ ժամկետներում: Ընդ որում, արգելվում է հաճախորդին տեղեկացնել, որ գործարքի կամ գործարար հարաբերության մերժումն իրականացվել է ՓԼ/ԱՖ վերաբերյալ կասկածներ ծագելու պատճառով կամ որ իր վերաբերյալ հաշվետվություն է ներկայացվել լիազոր մարմնին:

10. ԱՀԱԲԵԿԶՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ՈՉՆՉԱՑՄԱՆ ՏԱՐԱԾՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԱՆՁԱՆՑ ԳՈՒՅՔԸ ՍԱՌԵՑՆԵԼԸ

10.1. Ընկերությունը չի պահում հաճախորդների միջոցներ և մատուցում է բացառապես գործարքների կատարման հանձնարարություններ:

info@equiti.am | 5 Baghramyan Street, Apt 11, 0019, Yerevan, Republic of Armenia | +374 10.580972

Equiti AM CJSC ("Equiti AM") is Authorised and Regulated by the Central Bank of Armenia (License Number 0011). Registered office at 5 Baghramyan Street, Apt 11, 0019, Yerevan, Republic of Armenia

Էքուիթի ԷՅ ԷՄ ՓԲԸ ("Էքուիթի ԷՅ ԷՄ") Լիազորված է և Կանոնակարգվում է ՀՀ Կենտրոնական Բանկի կողմից (Լիցենզիայ N 0011).

Չասցե՝ Բաղրամյան 5. քնակարան 11, 0019, Երևան, Հայաստանի Հանրապետություն

10.2. Որտեղ կիրառելի է, ահաբեկչության կամ **զանգվածային ոչնչացման զենքի տարածման** հետ կապված գույքի սառեցումն իրականացվում է Օրենքով սահմանված կարգով:

11. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՎԱՔԵԼԸ, ՀԱՇՎԱՌԵԼԸ ԵՎ ՊԱՀՊԱՆԵԼԸ

11.1. Ընկերությունը պետք է պահպանի Օրենքով պահանջվող, ներառյալ՝ հաճախորդի պատշաճ ուսումնասիրության ընթացքում ձեռք բերված տեղեկությունները (ներառյալ՝ փաստաթղթերը)՝ անկախ նրանից, թե գործարքը կամ գործարար հարաբերությունը շարունակվում է, թե դադարեցվել է, այդ թվում՝

ա) հաճախորդի նույնականացման տվյալները, այդ թվում՝ հաշվեհամարի և հաշվի շարժի վերաբերյալ տվյալները, ինչպես նաև գործարար թղթակցության տվյալները.

բ) ներպետական և միջազգային գործարքների կամ գործարար հարաբերությունների վերաբերյալ բոլոր անհրաժեշտ տվյալները (ներառյալ՝ հաճախորդի (և գործարքի մյուս կողմի) անունը, հաշվառման հասցեն (առկայության դեպքում) և բնակության (գտնվելու) վայրը, գործարքի բնույթը, կատարման ժամկետը, գումարը և արժույթը, առկայության դեպքում նաև՝ հաշվի տեսակը և հաշվեհամարը), որոնք բավարար կլինեն տվյալ գործարքի կամ գործարար հարաբերության ամբողջական պատկերը վերականգնելու համար.

գ) Կասկածելի գործարքների կամ գործարար հարաբերությունների վերաբերյալ տեղեկությունները, ինչպես նաև կասկածելի չորակված գործարքների կամ գործարար հարաբերությունների դիտարկման ընթացքի (կատարված վերլուծության) և արդյունքների վերաբերյալ տեղեկությունները.

դ) փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման հնարավոր և առկա ռիսկերի գնահատման արդյունքները.

info@equiti.am | 5 Baghramyan Street, Apt 11, 0019, Yerevan, Republic of Armenia | +374 10.580972

Equiti AM CJSC ("Equiti AM") is Authorised and Regulated by the Central Bank of Armenia (License Number 0011). Registered office at 5 Baghramyan Street, Apt 11, 0019, Yerevan, Republic of Armenia

Էքուիթի ԷՅ ԷՄ ՓԲԸ ("Էքուիթի ԷՅ ԷՄ") Լիազորված է և Կանոնակարգվում է ՀՀ Կենտրոնական Բանկի կողմից (Լիցենզիայ N 0011).

Ջացե՝ Բաղրամյան 5. քնակարան 11, 0019, Երևան, Հայաստանի Հանրապետություն

ե) սույն Կանոնակարգով և Օրենքով սահմանված այլ տեղեկություններ:

11.2. Սույն Կանոնակարգի 11.1 -րդ կետով նախատեսված տեղեկատվությունը պահպանվում է էլեկտրոնային եղանակով:

11.3. Սույն Կանոնակարգով սահմանված տեղեկատվությունը էլեկտրոնային եղանակով ուղարկվում է արխիվացման՝ Ընկերության արխիվացման պատասխանատու աշխատակցին: Արխիվացման ուղարկված տեղեկատվության հետ միասին ուղարկվում է ամփոփաթեթ, որում նշվում է արխիվացվող տեղեկատվության ընդհանուր նկարագիրը և տեղեկատվությունը մշակող աշխատակցի անունն ու ազգանունը:

11.4. Տեղեկատվության արխիվացումն իրականացվում է 6 ամիսը մեկ անգամ:

11.5. Սույն Կանոնակարգի 11.1 -րդ կետով սահմանված տեղեկությունները (ներառյալ՝ փաստաթղթերը) պետք է պահպանվեն գործարար հարաբերության ավարտից կամ գործարքի կատարումից հետո՝ առնվազն 5 տարվա ընթացքում, իսկ օրենքով նախատեսված լինելու դեպքում՝ ավելի երկար ժամկետով:

11.6. Ընկերության արխիվացնող աշխատակիցը պետք է ապահովի պահպանվող տեղեկատվության անվտանգությունն ու գաղտնիությունը:

11.7. ՓԼ/ԱՖ ռիսկերի արդյունավետ կառավարման նպատակով Ընկերությունը՝ ֆինանսական խմբի ներսում տեղեկատվություն փոխանակելու առումով ձեռնարկում է մի շարք միջոցառումներ՝

ա) անհրաժեշտության դեպքում հարցումներ է կատարում խմբի անդամներին՝ հաճախորդի տվյալների, նրա գործարար բնութագրի, գործարքների, ինչպես նաև ՓԼ/ԱՖ դեմ պայքարի առումով հետաքրքրություն ներկայացնող այլ հարցերի վերաբերյալ տեղեկություն ստանալու համար: Հարցումներ կատարելիս հաշվի են առնվում խմբի տվյալ անդամի մոտ հաճախորդի մասին տեղեկությունների առկայության հավանականությունը, ինչպես նաև տվյալ երկրում գործող օրենսդրությամբ սահմանված սահմանափակումները (գաղտնիության ռեժիմները),

info@equiti.am | 5 Baghramyan Street, Apt 11, 0019, Yerevan, Republic of Armenia | +374 10.580972

Equiti AM CJSC ("Equiti AM") is Authorised and Regulated by the Central Bank of Armenia (License Number 0011). Registered office at 5 Baghramyan Street, Apt 11, 0019, Yerevan, Republic of Armenia

Էքուիթի ԷՅ ԷՄ ՓԲԸ ("Էքուիթի ԷՅ ԷՄ") Լիազորված է և Կանոնակարգվում է ՀՀ Կենտրոնական Բանկի կողմից (Լիցենզիայ N 0011).
Չասցե՝ Բաղրամյան 5. բնակարան 11, 0019, Երևան, Հայաստանի Հանրապետություն

բ) սահմանված կարգով իրականացնում է գործարքի կամ գործարար հարաբերության իրականացումը մերժված հաճախորդների հաշվառում և նրանց մասին տեղեկացնում է նաև խմբի մյուս անդամներին,

գ) ՓԼ/ԱՖ դեմ պայքարի նպատակով հնարավորին սեղմ ժամկետում պատասխանում է հաճախորդի մասին տեղեկություններ ստանալու վերաբերյալ խմբի անդամների ներկայացրած հարցումներին, եթե Ընկերությունը տնօրինում է այդ տեղեկություններին և այն չի համարվում օրենքով պաշտպանվող գաղտնիք կազմող տեղեկություններ:

11.8. Ընկերությունը՝ անհրաժեշտության դեպքում, խմբի անդամներին տեղեկացնում է լիազոր մարմնի կողմից Ընկերությանը ներկայացված առաջարկությունների և օրինական պահանջների վերաբերյալ:

12. ՆԵՐՔԻՆ ԱՌԻԴԻՏԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԴԵՊԲԵՐԸ ԵՎ ՀԱՃԱԽԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ, ԱՐՏԱՔԻՆ ԱՌԻԴԻՏԻ ՀՐԱՎԻՐՄԱՆ ԿԱՐԳԸ

12.1. Ընկերությունն իրականացնում է ներքին աուդիտ՝ հավաստիանալու համար, որ իր գործունեությունը համապատասխանում է Օրենքի, Օրենքի հիման վրա ընդունված այլ իրավական ակտերի և սույն Կանոնակարգի պահանջներին:

12.2. Ընկերության ներքին աուդիտի տարեկան ծրագրով պետք է նախատեսվի Օրենքին, Օրենքի հիման վրա ընդունված այլ իրավական ակտերին և սույն կանոնակարգին և իր գործունեության համապատասխանությունն ուսումնասիրելու պահանջ:

12.3. Սույն կանոնակարգի 12.2 .-րդ կետի պահանջների իրականացման արդյունքում կատարված եզրահանգումները (այդ թվում՝ ներքին աուդիտի տարեկան ծրագրի կատարման հաշվետվության համապատասխան բաժինը) պատշաճ կերպով ներկայացվում են լիազոր մարմնին՝ Ընկերության իրավասու մարմնի կողմից հաստատվելուց հետո մեկշաբաթյա ժամկետում:

info@equiti.am | 5 Baghramyan Street, Apt 11, 0019, Yerevan, Republic of Armenia | +374 10.580972

Equiti AM CJSC ("Equiti AM") is Authorised and Regulated by the Central Bank of Armenia (License Number 0011). Registered office at 5 Baghramyan Street, Apt 11, 0019, Yerevan, Republic of Armenia

Էքուիթի ԷՅ ԷՄ ՓԲԸ ("Էքուիթի ԷՅ ԷՄ") Լիազորված է և Կանոնակարգվում է ՀՀ Կենտրոնական Բանկի կողմից (Լիցենզիայ N 0011).

Չասցե՝ Բաղրամյան 5. քնակարան 11, 0019, Երևան, Հայաստանի Հանրապետություն

12.4. Ընկերության արտաքին աուդիտի իրականացման ժամանակ պետք է ուսումնասիրվի նաև փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի օրենսդրության պահանջների ներդրումը և դրանց կատարման արդյունավետությունը:

12.5. Լիազոր մարմնի կողմից ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով արտաքին աուդիտ իրականացնելու պահանջ ստանալու դեպքում հաշվետվություն տրամադրող անձը մեկամսյա ժամկետում հրավիրում է արտաքին աուդիտ, որի եզրակացությունը ստանալուց հետո մեկշաբաթյա ժամկետում տրամադրվում է լիազոր մարմնին:

13. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱՍՈՒ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԿԱՐԳԸ ՈՒ ՀԱՃԱԽԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

13.1. Ընկերությունը պետք է փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելման թեմայով առնվազն տարեկան 2 անգամ ուսուցում կազմակերպի խորհրդի, գործադիր մարմնի, ներքին դիտարկումների մարմնի, հաճախորդների սպասարկման և ներքին աուդիտի գործառույթներ իրականացնող, ինչպես նաև փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելման ոլորտում իրավասու այլ աշխատակիցների համար:

13.2. Նոր աշխատակիցների համար փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելման թեմայով ուսուցումը պետք է կազմակերպվի աշխատանքի ընդունումից հետո երեք ամսվա ընթացքում:

13.3. Ուսուցումն իրականացվում է հիմնականում ՓԼ/ԱՖ օրենսդրության փոփոխությունների, ինչպես նաև նոր տիպաբանությունների թեմաներով:

13.4. Յուրաքանչյուր հերթական ուսուցումը կազմակերպելուց առաջ ՓԼ/ԱՖ պատասխանատուն էլեկտրոնային փոստով ծանուցում է ՓԼ/ԱՖ ուսուցման անցկացման օրվա

և ժամի մասին: Եթե աշխատակիցներից մեկը չի կարող ներկա գտնվել ուսուցմանը նշանակված ժամին, ապա նշանակվում է ուսուցման այլ օր: Սույն կետի պահանջը չի տարածվում այն դեպքերի վրա, երբ աշխատակիցը գտնվում է գործուղման կամ արձակուրդի մեջ:

13.5. Ուսուցումից հետո ուսուցման նյութերն էլեկտրոնային փոստով ուղարկվում են բոլոր աշխատակիցներին:

13.6. Հաշվետվություն տրամադրող անձի իրականացրած ուսուցման նյութերը, դրանց մասնակցած աշխատակիցների տվյալները և մասնակցությունը հավաստող փաստաթղթերը պետք է հաշվառվեն և պահպանվեն առնվազն 5 տարի ժամկետով:

14. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐՈՂ ԱՆՁԻ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄՆԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈՂԵՐԻ ԼՎԱՅՄԱՆ ԵՎ ԱՀԱՔԵԿՉՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐՈՒՄ

14.1. Ընկերության գործադիր տնօրենը փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի նպատակներով իրականացնում է հետևյալ գործառնությունները.

14.1.1. սահմանում է Ընկերության՝ փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելման քաղաքականությունը,

14.1.2. հաստատում է ներքին դիտարկումների մարմնի և փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելման ոլորտում ներքին աուդիտի տարեկան ծրագրերը, դրանց կատարման հաշվետվությունները, հսկողություն է իրականացնում այդ ծրագրերի իրագործման նկատմամբ,

info@equiti.am | 5 Baghramyan Street, Apt 11, 0019, Yerevan, Republic of Armenia | +374 10.580972

Equiti AM CJSC ("Equiti AM") is Authorised and Regulated by the Central Bank of Armenia (License Number 0011). Registered office at 5 Baghramyan Street, Apt 11, 0019, Yerevan, Republic of Armenia

Էքուիթի ԷՅ ԷՄ ՓԲԸ ("Էքուիթի ԷՅ ԷՄ") Լիազորված է և Կանոնակարգվում է ՀՀ Կենտրոնական Բանկի կողմից (Լիցենզիայ N 0011).
Հասցե՝ Բաղրամյան 5. քնակարան 11, 0019, Երևան, Հայաստանի Հանրապետություն

14.1.3. անհրաժեշտության դեպքում ներքին դիտարկումների մարմնին հանձնարարում է իրականացնել Օրենքի 24-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված ուսումնասիրություններ, հաստատում է աուդիտի արդյունքում բացահայտված թերությունների վերացմանն ուղղված միջոցառումները և վերահսկում դրանց իրականացումը,

14.1.4. Նշանակում և պաշտոնից ազատում է ՓԼ/ԱՖ պատասխանատուին,

14.1.5. հաստատում է փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելմանն ուղղված ներքին իրավական ակտերը (այսուհետ՝ ներքին իրավական ակտեր),

14.1.6. քննարկում և հաստատում է ներքին աուդիտի եզրահանգումները, ինչպես նաև իր սահմանած հաճախականությամբ, բայց ոչ ուշ, քան կիսամյակը մեկ անգամ՝ ներքին դիտարկումների մարմնի՝ Օրենքի 24-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված հաշվետվությունները,

14.1.7. **Սույն ենթակետն ուժը կորցրած ճանաչել**

14.1.8. ապահովում է փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելման քաղաքականության ներդրումը, ինչպես նաև դրա արդյունավետ իրականացումը,

14.1.9. ապահովում է Օրենքի, սույն կանոնակարգի և Օրենքի հիման վրա ընդունված այլ իրավական ակտերի ամբողջական ու արդյունավետ կիրառումը և հսկողություն է իրականացնում դրա նկատմամբ,

14.1.10. ապահովում է իր աշխատակիցների՝ փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելման ոլորտում պատշաճ ուսուցումը,

14.1.11. կազմակերպում է ներքին դիտարկումների մարմնի գործունեությանն անհրաժեշտ նյութատեխնիկական ապահովվածությունը,

14.1.12. ապահովում է ներքին դիտարկումների մարմնի՝ Օրենքի 24-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված ուսումնասիրությունների, աուդիտի արդյունքում բացահայտված թերությունների վերացմանն ուղղված միջոցառումների իրականացումը,

14.1.13. իրականացնում է Օրենքով, սույն կանոնակարգով և Օրենքի հիման վրա ընդունված այլ իրավական ակտերով սահմանված այլ գործառույթներ:

15. ՆՈՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՆՈՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՆԵՐԴՐՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ՓԼ/ԱՖ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒԻ ՀԵՏ ՔՆՆԱՐԿԵԼԸ

15.1. Այն դեպքերում, երբ Ընկերությունը նպատակ ունի ներդնել նոր ծառայություններ կամ ներդնել և օգտվել նոր տեխնոլոգիաներից, դրանց ներդրման առնչությամբ ՓԼ/ԱՖ ռիսկերի վերաբերյալ ՓԼ/ԱՖ պատասխանատուն պետք է տրամադրի եզրակացություն: Արգելվում է առանց ՓԼ/ԱՖ պատասխանատուի դրական եզրակացության այդպիսի տեխնոլոգիաների կամ նոր ծառայությունների ներդնումը:

Հավելված 1

ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏՈՂ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՑԱՆԿ

Համակարգի անվանումը	Պատասխանատու անձ
1. KYC6 Worldcheck	Տիգրան Երանոսյան

Հավելված 2

ՉՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՂ ԿԱՄ ԲԱՐՁՐ ՌԻՍԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ ՑԱՆԿ

info@equiti.am | 5 Baghramyan Street, Apt 11, 0019, Yerevan, Republic of Armenia | +374 10.580972

Equiti AM CJSC ("Equiti AM") is Authorised and Regulated by the Central Bank of Armenia (License Number 0011). Registered office at 5 Baghramyan Street, Apt 11, 0019, Yerevan, Republic of Armenia

Էքուիթի ԷՅ ԷՄ ՓԲԸ ("Էքուիթի ԷՅ ԷՄ") Լիազորված է և Կանոնակարգվում է ՀՀ Կենտրոնական Բանկի կողմից (Լիցենզիայ N 0011).
Հասցե՝ Բաղրամյան 5. քնակարան 11, 0019, Երևան, Հայաստանի Հանրապետություն

1. Իրանի Իսլամական Հանրապետություն (չհամապատասխանող երկիր),
2. Կորեայի Ժողովրդական-դեմոկրատական Հանրապետություն (չհամապատասխանող երկիր),
3. Բահամաս (բարձր ռիսկայնության երկիր),
4. Բոտսվանա (բարձր ռիսկայնության երկիր),
5. Եթովպիա (բարձր ռիսկայնության երկիր),
6. Գանա (բարձր ռիսկայնության երկիր),
7. Պակիստան (բարձր ռիսկայնության երկիր),
8. Սիրիա (բարձր ռիսկայնության երկիր),
9. Սերբիա (բարձր ռիսկայնության երկիր),
10. Շրի Լանկա (բարձր ռիսկայնության երկիր),
11. Եմեն (բարձր ռիսկայնության երկիր)
12. Թունիսիա (բարձր ռիսկայնության երկիր),
13. Տրինիդադ և Տոբագո (բարձր ռիսկայնության երկիր):

info@equiti.am | 5 Baghramyan Street, Apt 11, 0019, Yerevan, Republic of Armenia | +374 10.580972

Equiti AM CJSC ("Equiti AM") is Authorised and Regulated by the Central Bank of Armenia (License Number 0011). Registered office at 5 Baghramyan Street, Apt 11, 0019, Yerevan, Republic of Armenia

Էքուիթի ԷՅ ԷՄ ՓԲԸ ("Էքուիթի ԷՅ ԷՄ") Լիազորված է և Կանոնակարգվում է ՀՀ Կենտրոնական Բանկի կողմից (Լիցենզիայ N 0011).
Հասցե՝ Բաղրամյան 5. քնակարան 11, 0019, Երևան, Հայաստանի Հանրապետություն